

տղամարդ: Դուք կաշխատեք լինել լիովին մաքուր և արժանիորեն կսպասավորեք հաղորդությունը: Դուք բարությանը և հարգանքով կվերաբերվեք ցանկացած երիտասարդ կնոջ: Դուք կպատվեք ձեր ծնողներին: Դուք կաշխատեք չվիրավորել չոզին ձեր մտքերով, խոսքերով կամ գործերով: Դուք կսկսեք ճանաչել Տիրոջը, որին ծառայում եք, և դուք կաշխատեք նմանվել Նրան:

Ես վկայում եմ, որ Ահարոնյան Քահանայությունում ձեր հավատարիմ ծառայությունը կփոխի նրանց կյանքը, ում ծառայում եք: Կան մարդիկ, ովքեր ձեր քահանայական ծառայության կարիքն ունեն: Չեր ընտանիքները ունեն ձեր կարիքը: Չեր քվորումները ունեն ձեր կարիքը: Եկնդեցին ունի ձեր կարիքը: Աշխարհն ունի ձեր կարիքը:

Աստծո առաջ ձեր պարտականությունը կատարելիս չպետք է հապաղեք: Ես վստահ եմ, որ այդպես էլ կանեք:

Մի քանի շաբաթ առաջ, մի ցուրտ առավոտ, ես վազում էի Թագուս գետի ափով Լիսաբոնում՝ Պորտուգալիա: Ես հասա մի հուշարձանի, որը նվիրված էր անցած դարի պորտուգալացի աշխարհագրագետներին: Ինձ ոգեշնչեցին աշխարհագրագետների վճռական դեմքերը՝ հայացքը հառած դեպի ջրերի հեռաստանները: Դա այն տղամարդիկ էին, ովքեր պատրաստ էին անել այն, ինչ շատ քչերն են արել: Նրանք հեռացան ծանոթ ու հարմարավետ աշխարհից և խիզախությամբ մտան անհայտ օվկիանոս և հայտնաբերեցին նոր հողեր: Նրանք փոխեցին աշխարհը:

Ես տեսնում եմ ձեզ, երբ մտածում եմ խիզախ աշխարհագրագետների այդ հուշարձանի մասին: Ես տեսնում եմ ձեզ անձնական ճամփորդության մեջ, որը այսօրվա աշխարհում քչերն են ընտրում: Ես տեսնում եմ ձեզ Աստծո առաջ ձեր պարտականությունը կատարելիս:

Ես աղոթում եմ, որ մենք բոլորս կարողանանք հասկանալ իրաչափ Ահարոնյան Քահանայությունը և վստահենք, ինչպես Աստված է վստահում, նրանց, ովքեր կրում են այն: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Նախագահ Դիտեր Ֆ. Ուխորոֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդակաճ

Համբերությանը շարունակենք

Համբերությունից քաղած դասերը կեղևնն մեր բնավորությունը, կբարձրացնեն մեր կյանքը և կլեռնացնեն նրջանկությունը:

1960-ականներին Սթենֆորդ համալսարանի մի պրոֆեսոր մի պարզունակ փորձ սկսեց, ստուգելով չորս տարեկան երեխաների կամփի ուժը: Նա նրանց առաջ մի մեծ կոնֆետ դրեց և ասաց, որ կարող են ուտել այն հենց այդ պահին, կամ 15 րոպե սպասելու դեպքում փոխարենը կատանան նրկու կոնֆետ:

Այնուհետև նա դուրս եկավ սենյակից, երեխաներին թողնելով մենակ և նրկու հայելիների միջոցով հետևում էր, թե ինչ է տեղի ունենում սենյակում: Երեխաներից մի քանիսն անմիջապես կերան կոնֆետը, մի քանիսը միայն մի քանի րոպե սպասեցին, ապա տեղի տվեցին գայթակողությանը: Եվ միայն 30 տոկոսը կարողացավ սպասել:

Դա հետաքրքիր փորձարկում էր և պրոֆեսորն անցավ հետազոտության այլ փուլերին, քանզի նրա խոսքերով, «այնքան շատ բաներ կան անելու այն երեխաների հետ, ովքեր փորձում են չուտել կոնֆետը»: Եվ ժամանակի հետ նա հետևեց երեխաներին և սկսեց նկատել հետաքրքիր կապ. այն երեխաները, ովքեր չէին կարողացել սպասել, մաքառել էին կյանքում և ավելի շատ վարքի հետ կապված խնդիրներ էին

ունեցել, մինչդեռ նրանք, ովքեր սպասել էին, հակված են եղել լինելու ավելի ինքնավստահ և ավելի նպատակասլաց, ստանալով բարձր թվանշաններ և ունենալով ավելի բարձր եկամուտ և ավելի առողջ հարաբերություններ:

Այդ ամենը սկսվեց երեխաների հետ մի պարզ փորձարկմամբ և վերածվեց նշանակալից ուսումնասիրության, որը եզրահանգեց, որ սպասելու ունակությունը, այսինքն՝ համբերատարությունը այն կարևոր գիծն է, որ կարող է կանխագուշակել կյանքի հետագա հաջողությունը:¹

Սպասելը կարող է դժվար լինել

Սպասելը կարող է դժվար լինել: Երեխաները գիտեն դա, մեծահասակներն էլ գիտեն: Մենք ապրում ենք արագ ուտելիքի ռեստորաններով, պատվերով կինոնկարներին և ամենաստվորական կամ կարևոր հարցերին տրվող անհապաղ պատասխաններով աշխարհում: Մենք չենք սիրում սպասել: Ումանց անգամ թվում է, իրենց արյան ճնշումը բարձրանում է, երբ մթերային խանութում կողքի մյուս հերթերի համեմատ իրենց հերթն ավելի դանդաղ է առաջ շարժվում:

Համբերությունը, որը մեր ցանկությունները որոշ ժամանակով պահ տալու ունակություն է, թանկ և հագվադեպ արժանիք է: Այն, ինչ մենք ուզում ենք, ուզում ենք այժմ: Ուստի, համբերության բուն գաղափարը կարող է տհաճ և, նրբեմն, դաժան թվալ:

Մական, առանց համբերության, մենք չենք կարող գոհացնել Աստծուն, չենք կարող կատարյալ դառնալ: Իսկապես, համբերությունը մաքրագործող ընթացք է, որը խորացնում է հասկացողությունը, ավելացնում է երջանկությունը, կենտրոնացնում է գործողությունը և խաղաղության հույս է պարզում:

Որպես ծնողներ, մենք գիտենք, որ խելամիտ չէ կատարել մեր երեխաների ամեն ցանկությունը: Մակայն միայն երեխաները չեն, որ փչանում են, երբ ցանկություններն անմիջապես կատարվում են: Մեր Երկնային Հայրը գիտե, թե ինչ են լավ ծնողները հասկանում ժամանակի ընթացքում՝ որպեսզի երեխաները հասունանան և հասնեն իրենց ներուժին, նրանք պետք է սովորեն սպասել:

Համբերությունը լույս սպասել չէ

Երբ ես 10 տարեկան էի, մեր ընտանիքը գաղթում է նոր երկիր: Մինչև Արևմտյան Գերմանիա տեղափոխվելը ես միշտ լավ էի սովորում դպրոցում: Այնտեղ կրթությունը նշանակալիորեն տարբեր էր: Աշխարհագրությունը, որ անցնում էինք իմ դպրոցում, նոր էր ինձ համար: Պատմությունը, որ սովորում էինք, նույնպես շատ էր տարբերվում: Նախկինում որպես երկրորդ լեզու ես անցնում էի ռուսերեն, այժմ անգլերենն էր: Դա դժվար էր ինձ համար: Իսկապես, եղել են պահեր, երբ ես համոզված եմ եղել, որ իմ լեզուն պարզապես անգլերեն խոսելու համար չէ:

Քանի որ դասացուցակը նոր էր և ինձ համար տարօրինակ, ես ետ ընկա: Իմ կյանքում առաջին անգամ ես սկսեցի մտածել, որ գուցե ես պարզապես բավականաչափ խելացի չեմ դպրոցի համար:

Քարեքայտաբար, ես ունեի մի ուսուցիչ, որը ինձ սովորեցրեց համբերատար լինել: Նա սովորեցրեց ինձ, որ հաստատուն և հետևողական



աշխատանքը, համբերատար հաստատականությունը, կօզնի ինձ սովորել:

Ժամանակի ընթացքում դժվար առարկաները պարզ դարձան, նույնիսկ՝ անգլերենը: Դանդաղ, ես սկսեցի նկատել, որ հետևողական լինելով կարող եմ սովորել: Դա արագ ձեռք չի բերվում, սակայն համբերությամբ տեղի է ունենում:

Այդ փորձառությունից ես սովորեցի, որ համբերությունը ամենևին էլ սպասելը չէ, որ ինչ-որ բան տեղի ունենա. պահանջվում է համբերություն, ակտիվորեն աշխատելով արժեքավոր նպատակներին ընդառաջ, և չպետք է հիասթափվել, երբ արդյունքները ի հայտ չեն գալիս անմիջապես կամ առանց ջանք գործադրելու:

Կարևոր գաղափար կա այստեղ՝ համբերությունը ճակատագրին պատասխանելու հնարանները կամ մեր վախերի պատճառով չգործելը չէ: Համբերությունը նշանակում է ակտիվ սպասել կամ տոկալ: Դա նշանակում է համառորեն դիմանալ և մեր ուժերի սահմանում անել ամեն ինչ՝ աշխատել, հույս տալով և հավատք գործադրել, տոկալով կրել դժվարությունները, անգամ երբ մեր սրտի ցանկությունները ձգձգվում են: Համբերությունը պարզապես դիմանալը չէ. դա լավ դիմանալն է:

Մյուս կողմից անհամբերությունը եսասիրության նշան է: Դա ինքնագոհության հատկանիշ է: Դա տարածված վիճակ է և այդ ախտանիշը կոչվում է «տիեզերքի կենտրոն», որի

առկայության ժամանակ մարդը հակված է լինում հավատալ, որ աշխարհը պատվում է իր շուրջը, իսկ մյուսները պարզապես աջակցող անձնակազմն են մահկանացու կյանքի այս մեծ թատրոնում, որում միայն իրենք են կատարում գլխավոր դերը:

Իմ եղբայրներ, որքան տարբեր է սա մեր՝ քահանայություն կրողների համար Տիրոջ կողմից սահմանված չափանիշից:

Համբերություն՝ Քահանայության սկզբունք

Որպես քահանայության կրողներ և Տեր Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչներ մենք պետք է ծառայենք մյուսներին Նրա օրինակին համապատասխան: Տրամաբանություն կա այն բանում, որ քահանայության ղեկավարության վերաբերյալ գրեթե ամեն մի դաս ի վերջո հանգում է Վարդապետություն և Ույստերի 121-րդ բաժնին: Մի քանի հատվածներում Տերը տալիս է քահանայության ղեկավարության վերաբերյալ հիմնական ուղղությունը. «Ոչ մի գործություն կամ ազդեցություն չի կարող և չպետք է պահպանվի քահանայության շնորհիվ. միայն համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեղությամբ և անկեղծ սիրով»:²

Այս հատվածներում նկարագրված բնավորության գծերն ու վարվելակերպը աստվածային համբերության հիմքն են և անքակտելիորեն կապված են արդյունավետ քահանայության և

հայրապետական ծառայության հետ: Այդ հատկանիշները ձեռք ուժ ու իմաստություն կտան մեծարելու ձեր կոչումները, քարոզելու ավետարանը, ընկերակցելու քվորումի անդամներին և կատարելու քահանայության ամենակարևոր ծառայությունը, որն իսկապես սիրո ծառայություն է, մատուցվում է ձեր տան պատերի ներսում:

Եկեք միշտ հիշենք, որ Աստծո կողմից քահանայությունը մեզ վստահելու պատճառներից մեկն է՝ օգնել մեզ պատրաստվել հավերժական օրհնություններին զարգացնելով մեր էությունը՝ քահանայության ծառայության մեջ պահանջվող համբերատարության միջոցով:

Քանի որ Տերը համբերատար է մեզ հետ, եկեք մենք էլ համբերատար լինենք նրանց հետ, ում ծառայում ենք: Հասկանալ, որ նրանք մեզ նման անկատար են: Նրանք մեզ նման սխալներ են գործում: Նրանք մեզ նման ցանկանում են, որ մյուսները իրենց մասին լավ մտածեն, չնայած հնարավոր է հանգամանքները հակառակն ասեն:


Երբեք ոչ մեկից հույսը մի կտրենք: Դա նշանակում է նաև, որ երբեք ինքներդ անձնատուր չլինենք:

Ես հավատում եմ, որ մեզանից ամեն մեկն էլ ինչ-որ ժամանակ կարող է նմանվել Քրիստոսի առակի այն ծառային, որը թագավորին փող էր պարտք և աղերսեց թագավորին ասելով. «Տեր, համբերիր ինձ համար»:³

Տիրոջ ուղին և ժամանակը

Իսրայելի զավակները անապատում սպասեցին 40 տարի, մինչև կարողացան մտնել խոստացված երկիր: Հակոբը 7 երկար տարիներ սպասեց Բաբելոն: Հրեաները Բաբելոնում 70 տարի սպասեցին, մինչև կարողացան վերադառնալ վերակառուցելու տաճարը: Մեփիսցիները սպասեցին Քրիստոսի ծննդյան նշանին, նույնիսկ իմանալով, որ եթե նշան չլիներ, նրանք կմռնեին: Չոզեֆ Միթի տառապանքները Լիբերթի Բանտում ստիպեցին անգամ Աստծո մարգարեին հարցնել. «Որքա՞ն»:⁴

Ամեն դեպքում, Երկնային Հայրը նպատակ ուներ, որը պահանջում



էր, որ Իր զավակները սպասեին:

Մեզանից յուրաքանչյուրը կանչված է սպասելու մեր կերպով: Մենք սպասում ենք աղոթքների պատասխաններին: Մենք սպասում ենք որոշ բաների, որոնք այդ պահին կարող է թվալ այնքան ճիշտ և այնքան լավ մեզ համար, որ մենք չպատկերացնենք, թե ինչու է Երկնային Հայրը հետաձգում պատասխանը:

Ես հիշում եմ, երբ պատրաստվում էի կործանիչ ինքնաթիռի օդաչուական իմ դասընթացին: Մենք զինվորական նախապատրաստական դասերի հիմնական ժամանակը տրամադրվում էր ֆիզիկական վարժություններին: Ես մինչ այժմ համոզված չեմ, թե ինչու էին անվերջ վազքի պարապմունքները համարվում օդաչու դասնալու համար հիմնական նախապատրաստական մասը: Այնուամենայնիվ, մենք վազում ու վազում էինք, և էլի էինք վազում:

Վազելիս ես սկսեցի նկատել մի բան, որ, ճիշտն ասեն, անհանգստացրեց ինձ: Կրկին ու կրկին ինձանից առաջ էին անցնում մարդիկ, ովքեր ծխում էին, խումբ և անում այնպիսի բաներ, որոնք ավետարանին դեմ էին, և հատկապես Իմաստության Խոսքին:

Ես հիշում եմ, որ մտածում էի. «Սպասիր մի րոպե, արդո՞ւք ես չպետք է վազեի և չհոգնեի»: Սակայն ես հոգնում էի, և ինձանից

անցնում էին մարդիկ, ովքեր հաստատ չէին հետևում Իմաստության Խոսքին: Ես խոստովանում եմ, այդ ժամանակ այդ փաստն անհանգստացրեց ինձ: Ես ինքս ինձ հարց տվեցի. «Այդ խոստումը ճի՞շտ էր, թե ոչ»:

Պատասխանը չնկավ անմիջապես: Սակայն ի վերջո, ես սովորեցի, որ Աստծո խոստումները չեն կատարվում այնքան արագ կամ այնպես, որ մենք ենք ակնկալում. դրանք գալիս են Իր ժամանակին և Իր ձևով: Տարիներ անց, ես պարզորոշ տեսա ապացույցը այն աշխարհիկ օրհնությունների, որոնք գալիս էին նրանց, ովքեր հնազանդվում էին Իմաստության Խոսքին՝ ի լրումն հոգևոր օրհնություններին, որոնք գալիս են անմիջապես Աստծո օրենքներից հնազանդվելուց: Ետ նայելով, ես գիտեմ հաստատ, որ Տիրոջ խոստումները, եթե գուցե միշտ չեն արագ կատարվում, սակայն անտարակուսելի են:

Համբերությունը հավատքի պահանջում

Բրիգամ Յանգն ուսուցանել է, որ երբ խնդիրներ էին ծագում, որոնք նա չէր կարողանում լիովին ըմբռնել, նա աղոթում էր Տիրոջը. «Ինձ համբերություն տուր, մինչև որ ինքս կհասկանամ դա»:⁵ Եվ ապա Բրիգամը շարունակում էր աղոթել մինչև որ կարողանում էր ընկալել դա:

Մենք պետք է իմանանք, որ Տիրոջ ծրագրում մեր հասկացողությունն աստիճանաբար է գալիս՝ «տող առ տող, ցուցում առ ցուցում»:⁶ Այսինքն, գիտելիքն ու հասկացողությունը համբերության գնով են գալիս:

Հաճախ մեր ներկայի խորը հովիտները կարող են հասկացվել միայն, երբ ետ նայենք դրանց մեր ապագա փորձառության լեռներից: Երբեմն մեր կյանքում չենք կարողանում տեսնել Տիրոջ ձեռքը, մինչև որ փորձություններից արդեն բավականին ժամանակ անցած է լինում: Հաճախ մեր կյանքի ամենաաղվաքին ժամանակները լինում են այն հիմնական քարերը, որոնք ձևավորում են մեր բնավորության հիմքը և ճանապարհ են հարթում դեպի ապագա հնարավորություններ, հասկացողություն և երջանկություն:

Համբերություն՝ Հոգու պտուղ⁷

Համբերությունը աստվածային հատկանիշ է, որ մենք կարողանանք բժշկել հոգիներ, բացել գիտելիքի և հասկացողության գանձեր, և սովորական տղամարդկանց և կանանց վերափոխելով դարձնել սրբեր և հրեշտակներ: Համբերությունը իսկապես Հոգու պտուղ է:


Համբերություն նշանակում է մնալ ինչ-որ բանի հետ մինչև վերջ: Դա նշանակում է հետաձգել վարձատրությունը ապագայի օրհնությունների համար: Դա նշանակում է զսպել զայրույթը և չասել անբարյացակամ խոսքը: Դա նշանակում է ընդդիմանալ չարին, երբ պարզվում է, որ այն հարստացնում է ուրիշներին:

Համբերություն նշանակում է ընդունել այն, ինչ չի կարող փոխվել, ընդունելով այն քաջությամբ, շնորհով և հավատքով: Դա նշանակում է լինել հոժարաբար ենթարկվել «բոլոր բաներին, որոնք Տերը հարմար է տեսնում բերել նրա վրա, ճիշտ ինչպես նրելսան է ենթարկվում իր հորը»:⁸ Ի վերջո, համբերություն նշանակում է լինել «կայուն ու հաստատուն, անխախտ՝ Տիրոջ պատվիրանները պահելիս»,⁹ ամեն օր ու ամեն ժամ, երբ անգամ դժվար է դա անել: Հովհաննես Հայտնիչի խոսքերով. «Այստեղ է սուրբերի համբերությունը. այստեղ են Աստուծո պատվիրանները և Հիսուսի հավատքը պահողները»:¹⁰

Համբերությունը կատարելության ընթացք է: Փրկիչն Ինքն է ասել, որ ձեր համբերությամբ կշահեք ձեր հոգիները:¹¹ Կամ օգտագործելով հունական մեկ այլ քարգմանություն, «ձեր հավատքով դուք *տևր կկանգնեք* ձեր հոգիներին»:¹² Համբերություն նշանակում է մնալ հավատքի մեջ, իմանալով, որ երբեմն ոչ թե ստանալու, այլ սպասելու ընթացքում ենք առավել աճում: Դա այդպես էր Փրկչի ժամանակ: Դա այդպես է մեր ժամանակ նաև, քանզի այս վերջին օրերին մեզ պատվիրվել է՝ «Համբերությամբ շարունակեք, մինչև որ կատարյալ դարձվեք»:¹³

Տերն օրհնում է մեզ մեր համբերության համար

Հին Սաղմոսողին մեջբերելով, նթն մենք սպասենք համբերությամբ



Տիրոջը, նա կլսի մեզ: Ես կլսի մեր աղաղակը: Ես մեզ դուրս կբերի տոսկալի հորից և մեր ոտքերը կդնի ամուր վեմի վրա: Ես մեր բերանում նոր երգ կդնի, և մենք կգովաբանենք մեր Աստծուն: Շատերը մեր շուրջը կտեսնեն դա, և նրանք կվստահեն Տիրոջը:¹⁴

Իմ սիրելի եղբայրներ, համբերության աշխատանքը հիմնականում կայանում է սրանում՝ պահեք պատվիրանները, վստահեք Աստծուն՝ մեր Երկնային Հորը, ծառայեք Նրան հեզությամբ և Քրիստոսանման սիրով, հավատք գործադրեք և հուսացեք Փրկչին, և երբեք անձնատուր մի եղև: Համբերությունից քաղած դասերը կհղկեն մեր բնավորությունը, կբարձրացնեն մեր կյանքը, և կմեծացնեն երջանկությունը: Դրանք կօգնեն մեզ դառնալ քահանայության արժանի կրողներ և մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտներ:

Իմ աղոթքն է, որ համբերությունը լինի բնորոշող գիծը մեր, որ

Ամենագոր Աստծո քահանայությունն ենք կրում, որ մենք արիաբար վստահենք Տիրոջ խոստումներին և Նրա ժամանակին, որ մենք վերաբերվենք մյուսներին համբերությամբ և կարեկցանքով, ինչին ինքներս ենք ձգտում, և որ մենք համբերությամբ շարունակենք, մինչև կատարյալ կդառնանք, Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տև յոնահ Լեյբեր, “Don’t! The Secret of Self-Control,” *New Yorker*, May 18, 2009, 26–27:
2. Վարդապետություն և Ուխտեր 121.41; տես նաև հատվածներ 39–45:
3. Սատրևոս ԺԸ.26:
4. Վարդապետություն և Ուխտեր 121.2:
5. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 75.
6. Վարդապետություն և Ուխտեր 98.12:
7. Տես Գաղատացիս Ե.22, 23:
8. Սոսիա 3.19:
9. 1 Նեփի 2.10:
10. Հայտնություն ԺԴ.12:
11. Տես Դուկաս ԻՄ.19:
12. Տես Դուկաս ԻՄ.19, տողատակի ծանուցում բ:
13. Վարդապետություն և Ուխտեր 67.13:
14. Տես Սաղմոս Խ.1–3: